ընորոշում են մեր այս վէպի հիմնական գաղափարը։ Ապա այս վէպի մէջ երևում է հայ ժողովրդի դիւցազների և իւր բարոյական և կրօնական սկզբունքները, հաւատալիքները, կենցաղը, յարաբերութիւնը, սովորոյթները, զգեստները. մի խօսքով ինչ որ կարող է մի նահապետական ժողովրդի կեանք ունենալ. ընտանեկան կեանքը և մանաւանդ կնոջ դերը, որ համարեա բացակայում է մեր պատմութեան մէջ, այստեղ ճշտօրէն արտայայտուած է են։ Մի այսպիսի ազգային ժողովրդական վէպի փոփոխակները, եթէ կարող են նորութիւն տալ, մի նոր գիծ աւելացնել, պէտք է գրի առնել և չթողնել, որ նշանախեցն անգամ կորչի։

Ապա Արարատի ընթերցողներին մեր 1906 թուականից իվեր այնտեղ հրատարակուած ուսումնասիրութիւնից, մանաւանդ այդ աշխատութեան վերջի մասը կազմող «Զոլանց տան կամ Սասմայ ծռեր Դաւիթ և Մհէր ազգային ժողովրդական վէպի պատմականը» երկից յայտնի է արդէն, թէ այդ վէպի զանազան փոփոխակներում գործող դիւցազների մեծ մասը հայ և օտար թագակիրներ, յատկապէս Է—ԺԳ դար ապրող իշխաններ, գլխաւորաւորապէս Մամիկոնեաններ, Արծրունիներ, այլ և Բագրատունիներ են. որտեղ մնացել են հնագոյն դիւցաբանական (Պատիկ Մհէր, Պարոն Աստղիկ) և առասպելական պատմական զրոյցների (Հայկի և Արայի) հետքեր և այլն։ Ուստի և կարևոր են այն տեսակ փոփոխակներ, որտեղ երևան են գալիս նորանոր աշխարհագրական և անձնանուններ, որ լրացնելով հին փոփոխակները, բաց կանեն մեզ նոր հորիզոններ։ Մի քանի տարի զբաղուելով թէ Զոլանց տուն—Մամիկոնեանց և թէ Բաղանց տուն—Արշակունեաց վէպով, այլև Թէօռ-Օղլիով և կարդալով մեր ցարդ տպագրուած և անտիպ հէքաթներն ու նաղլերը—զրոյցները, եկել ենք այն համոզման, որ շատերը պատմական աստառ ունին և այսպիսիները համարեա այն արժէքն ունին, ինչ որ Մ. Խորենացու Ա. գիրքը և առհասարակ նորա աւանդած առասպելներն ու զրոյցները, կամ Փ. Բուզանդացու մանաւանդ թէ Յովհան Մանդակունու վիպական պատմագրութիւնները։

Մեր վերոյիշեալ աշխատութեանց հետ համարեա միաժամանակ հետզհետէ լոյս տեսաւ Մ. Աբեղեանի «Հայ ժողովրդական վէպը»[1], Սասմայ ծռերի մի ընդարձակ և բազմակողմանի ուսումնասիրութիւն, որ յիշատակելով վերոյիշեալ 13 փոփոխակները «Նոր պատմուածքների անհրաժեշտութիւն» վերնագրի տակ ի միջի այլոց ասում է. «Նիւթի այս սակաւութեան պատճառով վէպի

---

1. Ազգագրական Հանդէս XIII. էջ 5—56. XIV էջ 58—68. XV էջ 5—52 XVII էջ 5—56. XVIII էջ 5—24։ Թիֆլիս 1906—1908։